ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2784-Ա « 29 » մայիսի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 3243-Ա ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-ԻՈ 4377-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 34-րդ հոդվածով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2026 թվականի մայիսի 22-ի N 1244-Ա և N 1250-Ա հրամանները.

1. Հաստատել՝

1) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության սոցիալական պաշտպանության բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-710) (հավելված 1),

2) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.1-711) (հավելված 2),

3) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչության առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.1-712) (հավելված 3),

4) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության երեխաների պաշտպանության բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-713) (հավելված 4),

5) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության երեխաների պաշտպանության բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.2-752) (հավելված 5),

6) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության երեխաների պաշտպանության բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.2-753) (հավելված 6),

7) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության սոցիալական պաշտպանության բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.2-754) (հավելված 7),

8) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության սոցիալական պաշտպանության բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.2-755) (հավելված 8) պաշտոնների անձնագրերը:

2. Ուժը կորցրած ճանաչել

1) Երևանի քաղաքապետի 2022 թվականի սեպտեմբերի 12-ի «Երևանի քաղաքապետի 2021 թվականի մայիսի 26-ի Հ.1674-Ա և 2022 թվականի հունվարի 25-ի Հ.257-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 3243-Ա որոշման 1-ին կետով հաստատված N 46-62 (ծածկագրեր՝ 3.2-671, 3.2-672, 3.2-673, 3.2-674, 3.2-675, 3.2-676, 3.2-677, 3.2-678, 3.2-679, 3.2-680, 3.2-681, 3.2-682, 3.2-683, 3.2-684, 3.2-685, 3.2-686, 3.2-687) հավելվածները.

2) Երևանի քաղաքապետի 2024 թվականի նոյեմբերի 12-ի «Երևանի քաղաքապետի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 4461-Ա, 2011 թվականի ապրիլի 21-ի N 1468-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 4377-Ա որոշման 1-ին կետով հաստատված N 1 (ծածկագիր՝ 1.3-85) հավելվածը:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչության վրա:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246